

Սերգեյ Աղաջանյան, Գուրգեն Մահարու արձակի պոետիկան, Եր., ԵՊՀ հրատ., 2011, 304 էջ*:

Վերջին տարիներին հայ գրականագիտության մեջ շահեկանորեն ավելանում է գրականության գեղագիտական ընկալմանը հետամուտ ուսումնասիրությունների թիվը, որոնք նորովի մեկնություններով ներկայացնում են ինչպես արդի ստեղծագործողների, այնպես էլ հայ գրականության մայրուղին ընդլայնած գրողների ժառանգության դեռևս անհայտ էջերը: Նման հետազոտությունների շարքում գեղագիտական ուրույն հարցադրումներով և նյութի մատուցման թարմությամբ առանձնանում է Սերգեյ Աղաջանյանի «Գուրգեն Մահարու արձակի պոետիկան» մենագրությունը¹:

Գուրգեն Մահարին խորհրդահայ գրականության ինքնատիպ դեմքերից մեկն է, որի գրական գործունեությանը ոչ միանշանակ, երբեմն էլ իրարամերժ գնահատականներ են տրվել: Գրողի անհատականությունը, ցավոք, հաճախ է բախվել ժամանակի գաղափարական կաղապարներին, առաջ բերել կենսական հանգամանքներից բխող ներքին երկվություններ, խոչընդոտել ստեղծագործական այն պոռթկումները, որոնք այլ պայմաններում թերևս ավելի խորը կբացահայտվեին: Այս ամենով հանդերձ, նրա արձակի հմայքը տևական է ու մնայուն, որի արժևորման խորքային գիտակցմամբ է ուսումնասիրվող նյութին մոտեցել Ս. Աղաջանյանը:

Հստակ պատկերացնելով Մահարու ստեղծագործական ժառանգության սահմանները և բազմաշերտ ներաշխարհը, գրականագետը ներածության մեջ տեղեկացնում է ընթերցողին, որ իր նպատակն է գրողի արձակ երկերի «վերլուծությունը հիմնախնդրային կամ բնութագրող առանձնահատկությունների հարցադրումներով»²: Իսկ հիմնախնդիրները Ս. Աղաջանյանը կոնկրետացրել է՝ տեսադաշտում ունենալով Մահարու արձակի պոետիկան, որը ցարդ հայ գրականագիտության մեջ լրջորեն չի հետազոտվել: Ընդ որում՝ պոետիկայի համակարգում, ելնելով Մահարու արձակի ինքնատիպ դրսևորումներից, հետազոտողը ծավալվում է երեք ուղղություններով՝ **գրողի երգիծանքը, պատումի ինքնատիպությունը և կերպարակերտման արվեստը:**

Այս համատեքստում քննվող նյութը հիմնավոր մուտք պիտի ունենար, ուստի առաջին գլուխը որոշակի նախապատրաստություն կարելի է համարել՝ «գրողը և ժամանակը» փոխառնչություններն ուղղորդող մի շարք հարցադրումներով՝ «Սահմանագծի» հոգեբանական ճգնաժամը», «Գրական մուտքի արձակը»,

*Ընդունվել է տպագրության 18.03.2012:

1 Գիրքը ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ 2011 թ. լույս է ընծայել ԵՊՀ հրատարակչությունը:

2 Սերգեյ Աղաջանյան, Գուրգեն Մահարու արձակի պոետիկան, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 26:

«Ենթատեքստն իբրև ակամա թերասացություն»:

Խորհրդային իրականությունն իր գաղափարական համակարգով խորթ էր Մահարու ստեղծագործական տարերքին, և բնական է, որ առաջին շրջանում թե՛ պոեզիայի և թե՛ արձակի ասպարեզներում նա լուրջ ձեռքբերումների չի հասել: «Քնարական ներհայեցումի» բանաստեղծը ժամանակի աղմկոտ կարգախոսներով նոր բան չէր կարողանում ասել, իսկ արձակ գործերում նկատվում էր «չապրված կենսական նյութի մակերեսայնությունը»: Վեր հանելով «գրողը և ժամանակը» փոխհարաբերություններում Մահարու հոգեբանական ճգնաժամի, ստեղծագործական ձախողումների շարժառիթները՝ Ս.Աղաջանյանը մինևույն ժամանակ նուրբ դիտարկումներով ի ցույց է դնում գրական զարգացման այն ճանապարհը, որը նշանավորվելու էր ստեղծագործության երկրորդ շրջանում ի հայտ եկած փոքր արձակի նվաճումներով:

Մահարու ստեղծագործական աշխարհի թերևս ամենահատկանշական կողմը նրա **կենսապատումային բնույթն** է, ինչը հիմք է տալիս գրականագետին ուշագրավ դիտարկումներ անելու գրական երկում հեղինակի ներկայության, նրա ստեղծագործելու խորհրդի, կերտած գեղարվեստական ժամանակի ու կերպարների մասին: Այդ դիտարկումները ձևավորում են որոշակի գեղագիտական հղացք (կոնցեպցիա), որի համատեքստում բացահայտվել են արձակագրի երգիծանքի, պատումի ինքնատիպության և կերպարակերտման շատ կողմերը: Այս իրողությունների համակողմանի քննությունը՝ առանձին գլուխներով, արդարացնում է կառուցվածքի ներքին տրամաբանական անցումները, համոզիչ դարձնում հիմնախնդրային ուսումնասիրության որդեգրված մեթոդը: Մեկ այլ կարևոր իրողություն. նախքան իր սկզբունքային հարցադրումներին անցնելը՝ Ս.Աղաջանյանը ներկայացնում է տվյալ հիմնախնդրի շուրջ տեսական գրականության մեջ առկա կարծիքները՝ դրանց քննական համադրությունն անցկացնելով նյութի հանդեպ իր մշակած գիտական հայացքի պրիզմայով:

Գրքում զգալի տեղ է հատկացված Մահարու երգիծանքին: Գրական այս ժանրին բնորոշ հիմնական առանձնահատկություններից մեկը՝ **սուբյեկտիվությունը**, համահունչ էր գրողի ներքին տարերքին, նրա ստեղծագործական դիրքորոշման առանցքային կողմերից մեկին, որը հայ գրականություն է ներբերել երգիծական շնչով տոգորված մահարիական արձակի «սուբյեկտիվ տարեգրության որակը»: Վերջինս արժեքավոր է հատկապես նրանով, որ գրողի երգիծանքի թիրախը միագիծ-միավեկտոր չէ. քաղաքականին զուգահեռ, այդ երգիծանքից պաշտպանված չեն նաև կենսական տարբեր հանգամանքներում հայտնվող մյուս կերպարները: Ոչ քիչ դեպքերում թիրախ է դառնում նաև ինքը՝ հեղինակը, դրանով իսկ բացառելով նյութի հանդեպ անձնական շահագրգռության գործոնները:

Գրողի երգիծանքի ինքնատիպ դրսևորումներից մեկն էլ, ըստ Աղաջանյանի, ողբերգական իրադրություններում երգիծականը հայտնաբերելու կարողությունն է, ինչը դժվարին խնդիր է և կարող է հաջողություն բերել միայն բացառիկ օժտվածությամբ հեղինակներին: Իր նուրբ վերլուծություններով Ս.Աղաջանյանը համոզում է ընթերցողին՝ առաջադրելով հետևյալ փաստարկումը. «Նրա (Գ. Մահարու - Գ.Պ.) երգիծանքը դառնում է հնարամտությամբ, համարձակությամբ, ինքնատիպությամբ լի, բայց նաև վտանգավոր գաղափարական ու գեղարվեստական խաղ: Գաղափարական, որովհետև ասելիքն է անսովոր, անսպասելի:

Գեղարվեստական, որովհետև նա պետք է կարողանա համոզիչ դարձնել պատկերը»³:

Աշխատության երրորդ գլխում Ս.Աղաջանյանը հանգամանորեն անդրադառնում է Մահարու գեղարվեստական պատումի ինքնատիպությունը մարմնավորող հնարանքներին, որոնց մեջ ընդգծում է **հեղինակի ներկայության** հնարավոր տարբերակները: Դրանք առանձնակի ուժով դրսևորված են Մահարու եռագրության մեջ («Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին») և «Այրվող այգեստաններ» վեպում: Առաջին պլանում պատմող հեղինակն է, որին բնորոշ է «ստեղծագործելու պահին վիպական գործողություններին միջամտելու ... ոճական կայուն նախապիրությունը»⁴: Գրողը հիշյալ ստեղծագործություններում հիմնականում հաջողություններ է արձանագրել, քանի որ դեպքերի, իրադարձությունների մասին պատկերավոր խոսքը վարպետորեն համեմել է հուզական ապրումներով: Ս. Աղաջանյանի սթափ հայացքը որոշ հատվածներում իրավացիորեն վեր է հանում նաև Գ. Մահարու սայթաքումները: Դրանք ի հայտ են գալիս հատկապես այն ժամանակ, երբ հեղինակ-պատմողը, տուրք տալով իր քաղաքական համոզմունքներին, պատումի գեղարվեստական լիցքերը փոխարինում է հրապարակախոսի դատողություններով:

Ս. Աղաջանյանն ուշագրավ դիտարկումներ ունի նաև «Ժամանակ և գեղարվեստական տեքստ» փոխառնչությունների վերաբերյալ՝ տեսադաշտում ունենալով «Այրվող այգեստաններ» վեպը: Նա խորությամբ ընկալում է **Ժամանակի գործոնի** մահարիական խաղարկումները, ի ցույց դնում անցյալ-ներկա փոխներթափանցումների դրսևորումները, որոնք, քննադատի եզրահանգմամբ, հարում են հավերժական ժամանակի գոյության պատրանքին: Թվում է, թե սա միֆական ժամանակն է՝ Վանի ու վանեցիների ինքնատիպ նկարագրով, դարավոր կենսակերպով ու կենցաղով: Սակայն բնօրրանի կորստով խաթարվել է անգամ ժամանակի կառուցվածքային բաղադրիչների բնական ընթացքը: Ուստի, Ս.Աղաջանյանի դիպուկ բնութագրմամբ՝ «Այրվող այգեստաններ» վեպում «հավերժական ժամանակը վերածվում է արտուրդի՝ զրկվելով ապագայից»⁵:

Գ. Մահարու պոետիկայի քննական մեկնաբանությանն ուղեկցող հետաքրքիր լուծումները շարունակվում են նաև չորրորդ՝ «Կերպարակերտումը» գլխում: Այստեղ էլ Ս. Աղաջանյանը, նախքան նյութի վերլուծությանն անցնելը, իր մտորումներն է շարադրում թատերական արվեստին և գրականությանը բնորոշ **կերպարակերտման** մի շարք հիմնարար սկզբունքների շուրջ: Դերասանի ու արտիստի, ապա նաև՝ արտիստի և գրողի ստեղծագործական անելիքների համեմատական քննությամբ ի հայտ են գալիս այլացումի հետաքրքիր տարբերակներ (արտիստի վերամարմնավորումը կերպարի, գրողի փոխակերպումը հերոսների մեջ), որոնք քննադատին հանգեցնում են ուշագրավ եզրահանգումների: Սրանք վկայում են, թե որքան բարդ ու դժվարին առաքելություն է ստանձնում ստեղծագործության հեղինակը՝ «խաղալով» մարդկային նկարագրեր: Այս դիտանկյունով Գ. Մահարու կերպարային խաղերի քննությունը կրկին գրողի օգտին է, թեև Ս.Աղաջանյանը հաջողված փոխակերպում- մարմնավորումների կողքին չի մոռանում տալ նաև չհաջողված կերպարների (սրանք անհամեմատ քիչ

3 Սերգեյ Աղաջանյան, Գուրգեն Մահարու արձակի պոետիկան, էջ 123:

4 Նույն տեղում, էջ 200:

5 Նույն տեղում, էջ 213:

են) քննական բնութագիրը: Ուսումնասիրության այս հատվածն ունի հետաքրքիր ենթագլուխ՝ «Ենթագիտակցականի իրողությունները կերպարակերտման մեջ»:

Ս. Աղաջանյանի վերլուծությունները հայանցիկ սահբ ունեն և հուշում են թեմայի առավել տարողունակ բնույթը: Նա անդրադարձել է հիմնականում Մահարու հերոսների կյանքում երագի, երագատեսության ու կանխագագաման խնդիրներին: Սակայն ենթագիտակցականի շրջանակները ավելի լայն են, ուստի ցանկալի է, որ հեղինակը հետագայում կենտրոնանա այս խիստ ուշագրավ հարցի վրա և մեկ այլ հետազոտությամբ ընդլայնի իր որոնումների սահմանները:

Ս.Աղաջանյանի «Գուրգեն Մահարու արձակի պոետիկան» մենագրությունը մեգանում ձևավորված գիտական ավանդույթների և գրական տեքստի նորովի ընկալման հաջողված համադրություն է, լուրջ ներդրում արդի հայ գրականագիտության մեջ:

Դավիթ Վ. Պետրոսյան
Բանաս. գիյ. դոկտոր

**David V. Petrosyan. - Sergey Aghajanyan,
The Poetry of Gurgen Mahari's Prose, Yerevan, YSU Publication,
2011, 304 pages.**